

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կոտայքի մարզ, քաղաք Աբովյանի №3 միջհամայնքային մանկապարտեզ

Թեմա՝ Ավագ նախադպրոցականի իմացական գործընթացների զարգացումը
մաթեմատիկական տարրական պատկերացումների ձևավորման
պարապմունքների ընթացքում

Վերապատրաստվող՝ Եսենյա Իշխանյան Վալերիյի

Վերապատրաստող՝ մ. գ. թ. Գայանե Մարտիրոսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	- 3 -
Գլուխ 1. ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ.....	- 6 -
ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ...	- 9 -
Գլուխ 2. ԳԻՏԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.....	- 11 -
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....	- 15 -
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	- 16 -

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ավագ նախադպրոցականների տարիքային զարգացման հիմնական ուղղություններից ելնելով՝ մաթեմատիկական պարապմունքները իրականացվում են որոշակի համակարգով՝ հինգից վեց տարեկան երեխաների տարիքային առանձնահատկություններին համապատասխան, ուսուցանվող նյութի բովանդակության աստիճանական բարդացման միջոցով:

Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները բխում են ավագ խմբի տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման և զարգացման ծրագրային խնդիրների պահանջներից (մինչթվային հասկացողությունների ամրապնդում, 10-ի սահմանում քանակական և կարգային համրանք, 10-ի սահմանում, թվերի համեմատում և կազմություն, պարզ և կոահման խնդիրներ, տարածական և ժամանակային պատկերացումներ, երկրաչափական պատկերների մասին նախազիտելիքներ և այլն):

Պարապմունքների ձևով իրականացվող ուսուցման ընթացքում երեխաները տիրապետում են ծրագրով նախատեսված որոշակի գիտելիքների և կարողությունների, որոնք չեն կարող յուրացվել ինքնաբուխ խաղերի կամ ինքնուրույն գործունեության միջոցով:

Յուրաքանչյուր պարապմունքի ընթացքում կիրառվում են զանազան մեթոդներ՝ բառային, դիտողական, գործնական, խաղային, գրաֆիկական, իսկ առաջադրվող դիդակտիկ (զանազան բաղադրիչ) նյութերը միջոց են երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար:

Հատկապես արդյունավետ է ուսուցման փոխներգործուն, ինտերակտիվ մեթոդները, որոնք ուղղված են երեխայի որոնողական և իմացական գործունեության ձևավորման, համարձակ կարծիք հայտնելու կարողության զարգացմանը, իմացական գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը:

Պարապմունքների ընթացքում ուսուցման առավել արդյունավետ միջոցներից մեկը դիդակտիկ խաղն է, որը դառնում է խաղի և պարապմունքի յուրօրինակ միաձուլում:

Հինգ տարեկան երեխան ցուցաբերում է հետաքրքրություն մաթեմատիկայի հանդեպ, պատկերացում ունի առարկայի հատկանիշների՝ գույնի, չափի, ձևի մասին, ճանաչում է թվերը և նրանց հետ կատարվող գործողությունները (փոքրացնել, մեծացնել, մասերի բժանել, հաշվել):

Նոր մատուցված գիտելիքները խթանում են երեխաների լեզվամտածողությունը, տրամաբանությունը, ստեղծագործական մտածողությունը: Ուսուցանված նյութերը երեխան պետք է ընկալի, վերհիշի և եզրահանգում կատարի:

Կրթական գործընթացը կազմակերպվում է մանկավարժի ղեկավարությամբ: Շաբաթական մեկ անգամ, 30 րոպե տևողությամբ, մեկ պարապմունք: Տարեկան կտրվածքով տարրական մաթեմատիկական պարապմունքների զարգացման պարապմունքների թիվը ավագ խմբում կազմում է 36 (շաբաթական մեկ պարապմունք):

Պարապմունքի կազմակերպման արդյունավետ ճանապարհը խաղային, սյուժետային նյութով ուսուցման կիրառումն է, սակայն նպատակահարմար չէ ոգեվորվել ավելորդ սյուժետային իրավիճակների ստեղծմամբ: Ուսուցման ընթացքում հիմնական շեշտը պետք է դրվի ուսումնական նյութի՝ խոսքի և գննական միջոցների ճիշտ ընտրության, հետազոտությունների վրա:

Խաղային առաջադրանքների միջոցով երեխաները հեշտությամբ են յուրացնում մաթեմատիկական հասկացությունները, կիսվում են ստացած գիտելիքներով, խաղային գործունեության միջոցով ճշտվում և ամրապնդվում են նրանց պատկերացումները թվերի, դրանց փոխադարձ կապի, երկրաչափական պատկերների, ժամանակի և տարածության մասին:

Ի տարբերություն մյուս մեթոդների՝ մաթեմատիկական հասկացությունները արդյունավետ է ուսուցանել որոշակի համակարգով և հաջորդականությամբ: Թեման հարկավոր է մատուցել փոքր բաժիններով՝ պարբերաբար կրկնելով անցածը, ընտրելով բավարար քանակի վարժություններ և գործելով երեխաների ուսումնական մակարդակին համապատասխան: Երեխաների սեղանների դասավորությունը՝ կիսաշրջանաձև, կամարաձև, ժապավենի նման ձգված գծով պետք է կախված լինի աշխատանքի բովանդակությունից և նպատակից: Պետք է ապահովվել տարածքը խաղային և ուսումնական գործունեության համար:

Երեխաները կարող են միավորվել մի խմբում՝ սեղանների շուրջ նստած, կամ բաժանվեն ենթախմբերի, գույգերի, դիտեն ցուցադրվող նյութը, աշխատեն անհատական զննական նյութով, գրուցեն, խաղան շրջանի կամ գորգի վրա:

Ուսուցման անհատական մոտեցումն ապահովում է յուրաքանչյուր երեխայի զարգացման անհատական տեմպը:

Գլուխ 1. ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Նախադպրոցականների մտավոր զարգացման և դպրոցին նախապատրաստվելու գործում մեծ է տարրական մաթեմատիկական ընդունակությունների զարգացման դերն ու անհրաժեշտությունը: Նախադպրոցական տարիքի երեխաների մաթեմատիկական ընդունակությունների զարգացում ասելով՝ հասկանում ենք որակական այն փոփոխությունները երեխայի ճանաչողական գործունեության մեջ, որոնք տեղի են ունենում տարրական մաթեմատիկական հասկացությունների ձևավորման արդյունքում:

Հաճախ են տարրական մաթեմատիկական ուսուցման գործընթացում առաջ գալիս մի շարք հարցադրումներ “Ինչպե՞ս սովորեցնել, որ երեխան հասկանա”, “Ինչպե՞ս է հասկանալու”, “Ինչո՞ւ է անում սխալ”: Երեխային դպրոցին նախապատրաստելիս, կարևորվում է ոչ այնքան նրա ձեռք բերած գիտելիքների քանակը, որքան դրանց գիտակցման աստիճանը: Հիշենք Յ. Ա. Կոմենսկու խոսքերը. “Սովորեցնել երեխային նշանակում է բառերով արտահայտել այն ամենը, ինչը նա տեսնում է, ինչպես նաև իմանալ այն բառերի իմաստը, որոնք գործածում է: Նա ով չի կարող մտքերը արտահայտել բառերով նման է արձանի, իսկ նա ով աշխատում է չհասկանալով բառերի իմաստը նման է թութակի”: Այսօր էլ նույն հիմնախնդիրը առկա է: Ուսուցման նպատակը պետք է լինի ձևակերպել երեխաների լիարժեք հասկացմանը, իսկ դրա համար կա մի պահանջ՝ երեխաների ինքնուրույն գործունեության ժամանակ չպետք է փոխանցվեն պատրաստի գիտելիքներ: Երեխային տրված պատրաստի գիտելիքները բերում են մեխանիկական հիշողության զարգացմանը և հետագայում կարող են երեխային բեկանել, երբ երեխան չի ցանկանում և ընդունակ չէ ընկալել այն ինֆորմացիան, որն արդեն համապատասխանում է իր տարիքին: Վերացական թութակի նման մինչև 100 հաշվելու ունակությունը, հատկապես խնդիրների լուծումը, որտեղ ոչ թե երեխան սովորում է մտածել և հասկանալ ինչն է հայտնի, ինչը անհայտ, որոշում թվաբանական գործողությունները և հաշվարկ կատարում (5+2) այլ հաշվարկում է “կար 5, շարունակելով հաշվել 6, 7, ընդամենը՝ 7 ավտոմեքենա” երեխան սովորում է, բայց միայն բառային մակարդակի վրա:

Նախադպրոցական մաթեմատիկայի ուսուցման հիմնական նպատակը՝ տարրական մաթեմատիկական մտածողության զարգացումն ու խթանումն է:

Առանձնացվում է մաթեմատիկական հետևյալ ընդունակությունները.

- մաթեմատիկական ընդունակությունների զարգացում
- գլխավորը երկրորդայինից առանձնացնելու ընդունակություն
- մտածողության ճկունություն, մի գործողությունից մյուսին անցնելու ընդունակություն
- նախաթվային (մեծություն, ձև, տարածություն և ժամանակի մեջ կողմնորոշվել) և թվային (1-10 թվեր, թվանշաններ, թվի կազմություն, թվաբանական գործողություններ...) պատկերացումները օգտագործելու ընդունակություն
- շրջապատում երկրաչափական պատկերների նման առարկաներ գտնելու ընդունակություն:

Շատ են նաև նախադպրոցական տարիքի համար մշակված տրամաբանական-մաթեմատիկական խաղերը: Մաթեմատիկայում կարևոր է սովորեցնել մտածել տրամաբանորեն, դատել, գտնել մաթեմատիկական հարաբերությունները, նրանց փոխադարձ կապն ու կախվածությունը:

Ավագ նախադպրոցական տարիքում երեխաների մտածողական գործունեությանը խթանում են մտավոր հետաքրքրությունները, որոնք դառնում են գործունեության հիմնական դրդապատճառները իրագործելու “ուզում եմ ամեն ինչ իմանալ” ցանկությունը:

Այս տարիքում դրսևորվում են ակնառու-պատկերավոր մտածողությունը: Երեխան աստիճանաբար փորձում է մտածել ոչ միայն տեսնելով և գործելով, այլև պատկերացնելով: Նախադպրոցականի մտածողության այս ձևը երեխայի մեջ ձևավորում է տրամաբանելու և խոսքով սեփական կարծիքներն արտահայտելու ընդունակությունը՝ տրամաբանախոսքային մտածողությունը, որին ուղղորդում է մեծահասակը և սովորեցնում է մտածել ինքնուրույն վերլուծել գործողությունների ընթացքը: Համեմատել, վերլուծել, գտնել, պարզել պարզ օրինաչափություններ: Երեխաները կարող են կիրառել արդեն յուրացրած գործելաձևերը, գործում են գիտակցված, տեղին են օգտագործում ընդհանրացնելու և վերացնելու հմտությունները: Աշխատանքի ձևերի բարձացումներն ու տարատեսակությունը, իրավիճակների փոփոխումը, երեխաներին տրված հարցերը, օգնում են երեխաների ինքնուրույնությանը և ըմբռնողականությանը՝ նրանց մեջ արթնացնելով միևնույն խնդրի լուծման տարբեր ուղիներ փնտրելու հետաքրքրություն: Այս տարիքում ակտիվանում է մտային գործողությունների զարգացման մակարդակը: Մեծ ուշադրություն է հատկացվում պարզագույն մտահանգումներ կատարելու ընդունակության զարգացմանը: Ընդլայնվում, համակարգվում, ընդհանրացվում և խորացվում են ձեռքի բերված պարզ մաթեմատիկական հասկացությունները: 5-6

տարեկան երեխաները արդեն ունեն հնարավորություն գնահատելու որոշ լուծումների տարբերակներ և հանգել եզրակացության, որոնց զարգացմանը օգնում են մանկավարժական պայմանները, որտեղ իրականացվում են երեխային սովորեցնելու ցանկությունը հետաքրքրության զարգացումը: Յուրաքանչյուր պարապմունք պետք է նպատակ ունենա.

- ուսուցման արդյունավետ մեթոդներ, որոնք կօգնեն ձևավորել մտավոր գործողություններ կատարելու ունակությունը
- խմբում բարիացական մթնոլորտը
- մանկավարժի պատրաստվածությունը
- խոսքի ազդեցությունը

Տարիքային առանձնահատկություններից ելնելով, ուսուցման գործընթացում առաջ է քաշվում անհատական մոտեցման խնդիր, որը տալիս է հնարավորություն ոչ միայն օգնելու երեխաներին յուրացնելու ծրագրային նյութը, այլև զարգացնում է հետաքրքրությունը դեպի պարապմունքը, ապահովվում է ամբողջ խմբի ակտիվ մասնակցությունը:

**ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՎԱԳ
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ
ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Մաթեմատիկական հասկացությունների և ընդունակությունների ձևավորման գործում մեծ է տրամաբանական մտածողության դերը: Տրամաբանական մտածողությունը բնության պարզ և, նրա զարգացման համար անհրաժեշտ է նպատակաուղղված և հաջորդականացված աշխատանքների իրականացում:

Նախադպրոցականի տրամաբանական մտածողության զարգացմանը նպաստում են ոչ ստանդարտ բնույթի կռահման խնդիրները, որոնց նպատակն է մարզել երեխաների միտքը և երևակայությունը, օգնել, որ նրանք հեշտ կռահեն պարզագույն հաշվումներով կազմված խնդիրները, հեշտությամբ մտնեն թվերի զարմանահրաշ աշխարհը:

Երեխան պետք է գիտակցի, որ նման խնդիրները իրենց մեջ պարունակում են ինչ-որ ենթատեքստեր և դրանց լուծման համար նախ պետք է հասկանալ, թե ինչ է թաքնված: Երեխաները պարզունակ խնդիրները, ինչպես օրինակ. ուներ 4 խնձոր, երկուսը տվեց քրոջը... լուծում են առանց որևէ ջանքերի, իսկ կռահման խնդիրների լուծման ուղղվածությունը տալիս են որոշ բնույթ, որը և մտածողության գործընթացի ամենաէական հատկանիշն է: Տրամաբանական խնդիրների օրինակներ են.

- Ափսեի մեջ կար 4 խնձոր, մեկը բաժանեցին երկու հավասար մասերի: Քանի՞ խնձոր մնաց:
- Երկու խոզ ունեին հավասար խոճկորներ: Նրանցից մեկն ունի վեց խոճկոր: Քանի՞սը ունի մյուսը:
- Սեղանին վառվում է 5 մոմ: Երկուսը մարեցին: Քանի՞սը մնաց:
- Դատարկ բաժակում քանի՞ կոնֆետ կա:
- Խնձորենու վրա կար 8 տանձ, երկուսը պոկեցին: Քանի՞ տանձ մնաց խնձորենու վրա:

Նախադպրոցականի տրամաբանական մտածողության զարգացման գործում մեծ են նաև տրամաբանական տիպի վարժությունները:

- Առարկաների դասակարգումը ըստ գունային հատկանիշի (վերցրու կարմիր գնդակը)
- Առարկաների դասակարգումը տարածության մեջ (առջևում, վերևում, ներքևում)
- Առարկաների դասակարգումը ըստ երկու-երեք հատկանիշի (երկրաչափական պատկերների առանձնացումը ըստ գույնի, ձևի, մեծության)

- Պակասող առարկայի, սխալի փնտրում ու գտնելը ապահովող վարժություններ
- Առարկայի տրամաբանական շարքի օրինաչափություններին նպաստող վարժություններ:

Մաթեմատիկական հանելուկները ևս հզոր ներգործություն ունեն երեխայի տրամաբանական մտածողության ձևավորման համար: Հանելուկները մարզում են երեխայի միտքը, ստիպում են դիմել տարատեսակ հնարների ճիշտ պատասխանը որոնելու և ասելու համար: Հանելուկները նաև միջոց են ստուգելու երեխաների ուշադրությունը, նրանք նպաստում են երեխաների վստահությանը իրենց իսկ ուժերի նկատմամբ:

Մաթեմատիկական բովանդակության հանելուկները հետապնդում են հետևյալ նպատակները:

- Առարկաների քանակը և քանակական հարաբերությունները ամրապնդող
- Թվաբանական գործողություններն ամրապնդող
- Երկրաչափական պատկերներն ամրապնդող

Տրամաբանական մտածողության և տեսողապատկերային մտածողության զարգացման գործում որոշակի տեղ է հատկացվում դիդակտիկ ոչ ստանդարտ միջոցներին՝ հաշվիչ փայտիկներին: Փայտիկների կիրառումը նաև զգացական փորձի կուտակման, մաթեմատիկական ընդունակությունների զարգացման գործընթացում: Հատկապես գունավոր փայտիկների օգնությամբ երեխաներին շատ հեշտ է դրդել հետևյալ մաթեմատիկական հասկացությունների ամրապնդմանը.

- Շատ և քիչ կարմիր փայտիկները շատ են, կանաչները՝ քիչ
- Թվանշանային համապատասխան փայտիկներ առանձնացնելը – սպիտակը մեկն է, կապույտը՝ երկու, կանաչը՝ երեք և այլն:
- Առարկայի հատկանիշը _ գտնել այն փայտիկը, որն իր երկարությամբ հավասար է միասին դրված երեք դեղին փայտիկներին:
- Երկրաչափական պատկերները _ համապատասխան քանակի փայտիկներից կառուցել քառակուսի, եռանկյուն, ուղղանկյուն:

Երեխաների մաթեմատիկական ընդունակությունների զարգացման տեսանկյունից հաշվիչ փայտիկների կիրառումը բավականին արդյունավետ է և լիովին համապատասխանում է նախադպրոցական տարիքի երեխաների տարրական մաթեմատիկական ընդունակությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Գլուխ 2. ԳԻՏԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Գիտափորձի նպատակն է զրույցի և թեստերի միջոցով ուսումնասիրել և ներկայացնել ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մաթեմատիկական ընդունակությունների զարգացման դերն ու արդյունավետությունն, ուսուցումն ապահովվող միջավայրը, զարգացման բովանդակությունն ու դիդակտիկական հիմքերը:

Հետազոտության ընթացքում առանձնացվել է հետևյալ խնդիրները.

- Կատարել հոգեբանամանկավարժական գրականության վերլուծության:
- Հիմնավորել մաթեմատիկական ընդունակությունների զարգացման առանձնահատկությունները:
- Մանկավարժական աշխատանքի միջոցով (պարապմունքներ, խաղ-պարապմունքներ, թեստեր) ուսումնասիրել և որոշել երեխաների մաթեմատիկական ընդունակությունների զարգացման մակարդակը:
- Ձևավորել մաթեմատիկական հմտություններ
- Ստեղծել սենսորային, ճանաչողական և ստեղծագործական ընդունակությունները ապահովող միջավայր
- Ախտորոշել երեխաների հաղորդակցման և համագործակցության ընդունակությունների առկայությունը:

Փորձարարական աշխատանքներն անց են կացվել Աբովյան քաղաքի, թիվ 3 միջհամայնքային մանկապարտեզի ավագ խմբում՝ 2022թ. Ուսումնական տարվա դեկտեմբերին:

Հետազոտությանն ընդգրկվել են ավագ նախադպրոցական տարիքի թվով 28 երեխա՝ 14 տղա և 14 աղջիկ:

Ավագ նախադպրոցականի մաթեմատիկական ընդունակությունների զարգացման առանձնահատկությունների տարրական մաթեմատիկական հասկացությունների ախտորոշմանն ուղղված գիտափորձարարական աշխատանքները ընթացել են 3 փուլով.

1. Արձանագրող
2. Ձևավորող
3. Ստուգիչ

Արձանագրող փուլում կիրառել են դիտման, զրույցի և թեստավորման մեթոդները: Վերջիններիս միջոցով փորձ է արվել բացահայտել ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մաթեմատիկական ընդունակությունների զարգացման մակարդակը:

Ձևավորող փուլն իր մեջ ներառում է պարապմունքներ, խաղեր, վարժություններ, որոնք ուղղված են եղել մաթեմատիկական ընդունակությունների ձևավորմանն, զարգացմանը և առաջացած դժվարությունների շտկմանը:

Ստուգիչ փուլում ներկայացված է նպատակաուղղված մանկավարժական աշխատանքներից հետո ասացած արդյունքների համեմատությանն ու վերլուծմանը:

Առաջին փուլի նպատակն էր բացահայտել ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մաթեմատիկական ընդունակությունների զարգացման մակարդակը: Դիտվել են մաթեմատիկական հասկացությունների ձևավորմանն ուղղված պարապմունքներ: Առաջին փուլում անց է կացվել դիտում և երեխաների խաղային գործունեության վերլուծություն: Դիտել են ժամանակի և տրամաբանական մտածողությունը խոսող կառուցողական ընդունակությունների ձևավորմանը և ամրապնդմանը վերաբերող պարապմունքներ:

Պարապմունքի նպատակն էր ճշտել երեխաների գիտելիքները օրվա ժամանակահատվածների մասին:

Պարապմունքի առաջին մասում երեխաները իմացան, որ օրվա մասերը չորսն են՝ առավոտ, կեսօր, երեկո, գիշեր: Օրվա մասերի ծանոթացումը կապվեց երեխաների անձնական փորձի հետ կապված գրույցով:

- Երեխաներ, դուք տանը արթնանում եք, երբ մայրիկն ասում է, որ արթնանալու

ժամանակն է, արդեն առավոտ է: Ի՞նչ եք անում առավոտյան:

Անի - Ես հագնվում եմ, ուղղում անկողինս, լվացվում: Մայրիկս սանրում է մազերս և մենք գալիս ենք մանկապարտեզ:

- Դուք ե՞րբ եք գալիս մանկապարտեզ:

Գարիկ - Առավոտյան, երբ մայրիկը բերում է:

Մարինե - Երբ բոլորը գնում են աշխատանքի:

Այնուհետև նկարների օգնությամբ ցուցադրվեցին տարբեր գործողություններ, որոնք բնորոշ են օրվա տվյալ պահին:

Երեխաներին ուղղվեցին հարցեր կապված նկարներում առկա հերոսների գործողությունների հետ:

- Ե՞րբ է տեղի ունենում:

Երեխաների մեծ մասը անվանում են գործողության ժամանակը և կարողանում են հեշտությամբ բացատրել, թե ինչու են նրանք այդպես մտածում: Երեխաներից մի քանիսն անուշադիր էին, կամ ճիշտ պատասխան էին տալիս բավականին ուշացումով՝ դաստիարակի հուշումից հետո միայն: Այնուհետև երեխաները պետք է առանձնացնեին այն նկարները, որոնք տեղի են ունենում օրվա կոնկրետ ժամանակահատվածում (առավոտյան, ցերեկը, գիշերը): Երեխաների գիտելիքների ամրապնդման համար

օգտագործվեցին հեքիաթներից հատվածների ընթերցանություն: Կիրառվեցին նաև “Անվանի՛ր բաց թողնված բառը” բառային խաղը: Այս պարապմունքի ընթացքում առավել շատ երեխաներ էին ակտիվ: Մյուս պարապմունքի նպատակն էր ճշտել երեխաների գիտելիքները շաբաթվա օրերի հաջորդականության մասին: Ամրապնդել շաբաթվա օրերի թիվը, հաջորդականությունը:

Պարապմունքի առաջին մասում երեխաները իմացան, որ շաբաթն ունի յոթ օր, որ նրանք հաջորդում են մեկը մյուսին՝ երկուշաբթի, երեքշաբթի,...

Այնուհետև նկարների օգնությամբ ցույց տվեցին տարբեր գործողություններ, որոնք բնորոշ են շաբաթվա տվյալ օրվան: Որից հետո երեխաներին տվեցին հարցեր. “Այսօր շաբաթվա ո՞ր օրն է”, “Ո՞րն էր երեկ”, “Ո՞րը կլինի վաղը”: Երեխաների գրեթե կեսը կարողացան առաջադրված հարցերին պատասխանել, իսկ մյուսները պատասխանում էին հուշումից հետո միայն:

Երկրորդ փուլում, ամփոփման նպատակով, անցկացվեցին անհատական գրույցներ երեխաների հետ:

Նպատակը՝ բացահայտել երեխաների ունեցած պատկերացումները ժամանակի տարբեր հատվածների վերաբերյալ:

Հարցեր.

- 1) Ի՞նչ ես անում դու առավոտյան:
- 2) Ինչպե՞ս են անվանում շաբաթվա առաջին և յոթերերդ օրերը:
- 3) Շաբաթվա ո՞ր օրն էր երեկ:
- 4) Ո՞րն է շատ՝ շաբաթը թե 7 օրը:
- 5) Ինչպե՞ս են անվանում շաբաթվա օրերը:
- 6) Քանի՞ օր էք գալիս մանկապարտեզ, ո՞ր օրերին:
- 7) Ո՞ր օրերին ենք հանգստանում:
- 8) Ձեռքերի մատների միջոցով ցոլյց տվեք՝ այս շաբաթ քանի՞ օր ենք եկել մանկապարտեզ, քանի՞ օր ենք մնացել տանը:
- 9) Ո՞ր օրվանից է սկսվում շաբաթը:
- 10) Շաբաթվա ո՞ր օրն էք ամենից շատ սիրում, ինչո՞ւ:

Երեխաներին շաբաթվա օրերի մասին պլուստային անգույն նկարներ բաժանել և առաջարկել դասավորել հաջորդաբար, այնուհետև գունավորել: Աշխատանքն ավարտելուց հետո նշել այն օրը, որը սիրում են:

Պատասխանների վերլուծությունը ցույց է տվել, որ երեխաները շատ են սիրում “Օրվա մասերը” և տարվա եղանակները: Մի փոքր դժվարանում են շաբաթվա օրերը և տարվա ամիսները թվարկելիս և բնութագրելիս:

Արձանագրող փուլի արդյունքները վերլուծելով, մենք եկանք հետևյալ եզրակացության.

- Ավագ նախադպրոցականները ժամանակի մասին ունեցած պատկերացումները բնութագրում են զարգացման բարձր մակարդակով, բավականին հարուստ է նրանց ունեցած գիտելիքները ժամանակը զգալու առումով:
- Երեխաները խաղային առաջադրանքները լուծում են արդեն ծանոթ միջոցներով:
- Գերիշխում է պատրաստի գիտելիքների մոտեցումը:

Կարելի է արձանագրել, որ երեխաների 100%-ից 60%-ը ունեն ժամանակի զգացողությունը ընկալելու բարձր մակարդակ, 25%-ը միջին մակարդակ, 15%-ը ցածր մակարդակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերլուծելով փորձարարական աշխատանքի արդյունքները՝ կարելի է եզրակացնել.

Հատուկ մշակված պարապմունքների, բազմաֆունկցիոնալ խաղերի և վարժությունների օգտագործումը, որոնք իրենց խնդրի յուրահատուկ կառուցման (գտի՛ր, կռահի՛ր) հեքիաթի ինչ-որ հերոսի անվան օգտագործման անսպասելիությամբ, նպաստում են երեխաների մոտ մաթեմատիկական հասկացությունների և ընդունակությունների զարգացման մակարդակի բարձրացմանը:

Նախադպրոցականին պետք է տրվի մաթեմատիկական հասկացությունների մասին գիտելիքների համակարգված ամբողջություն (“մանկապարտեզի համալիր ծրագիր”), որը և կնպաստի երեխաների մաթեմատիկական և տրամաբանական մտածողության զարգացմանը:

Մաթեմատիկական հասկացությունների ձևավորման գործընթացում, հաշվի առնելով երեխայի տարիքային և անհատական առանձնահատկությունները և մաթեմատիկական ընդունակությունների զարգացման մակարդակը, անհրաժեշտ է ներառել բազմատեսակ մեթոդները:

Ուսուցումն ավելի արդյունավետ է, եթե այն ընթանում է գործնական և խաղային գործունեության ճանապարհով, որոնցում երեխաների ստացած գիտելիքներն անհրաժեշտ են դառնում առաջադրանքը կատարելիս:

Մեծահասակի հետ համատեղ գործունեության արդյունքում կանխվում են ուշտկվում մաթեմատիկական ընդունակությունների զարգացման հետ կապված դժվարություններ, զարգանում երեխաների ինքնուրույնությունն ու վերլուծական կարողությունները:

Այսպիսով կարող ենք վստահորեն փաստել, որ ուսուցման տարատեսակ ձևերից, մեթոդների և հնարների համալիր օգտագործումը օգնում է լուծել հիմնական խնդիրներից մեկը՝ իրականացնել նախադպրոցականի մաթեմատիկական պատրաստվածությունը, նրա մտածողությունը հասցնել բավարար մակարդակի՝ դպրոցում մաթեմատիկայի հաջող ուսումնառության համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս. Ա. Չիբուխյան “Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում” Երևան 2014թ.
2. Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան “Նախադպրոցական մանկավարժություն” Երևան 2008թ.
3. Հ. Միտոյան “Ուսումնական ձեռնարկ մանկապիսարտեզի համար” Երևան 2020թ.
4. Հ. Ս. Հարությունյան “Խաղալով սովորում ենք մաթեմատիկա” Երևան 2003թ.
5. Լ. Ս. Մետլինա “Մաթեմատիկական մանկապարտեզում” Երևան 1988թ.